

Հեռախոսային Բանկային Ծառայություն

Մեկ զանգ և Դուք բանկում եք

Տեղեկատվական ամփոփագիր
ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար

Հրապարակման ամսաթիվ՝ մայիս, 2023

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:
Գործող պայմաններին ամբողջապես ծանոթանալու, ինչպես նաև լրացուցիչ
տեղեկատվություն ստանալու նպատակով այցելեք մեր ինտերնետային կայքը՝
www.hsbc.am, ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարեք
+374 60 655 000 հեռախոսահամարով:



Պարզ և ապահով

- Ձեզ անհրաժեշտ է արագ բանկային գործարքներ իրականացնել, բայց բանկ այցելելու ժամանակ չունեք
- Ցանկանում եք հաշվի հետ կապված հարցումներ կատարել առանց հերթի կանգնելու
- Մեր ծառայությունների վերաբերյալ խորհրդատվության կարիք ունեք

Էյշ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի կողմից առաջարկվող հեռախոսային բանկային ծառայությունը նախատեսված է Ձեզ համար:

Ընդամենը մեկ հեռախոսազանգ և Ձեր գործարքները կիրականացվեն առավելագույնս արագ և ապահով:

Ծառայությունը հասանելի է շուրջօրյա, շաբաթը 7 օր՝ առանց հանգստյան օրերի: Զանգահարեք ցանկացած վայրից, ցանկացած ժամի, և ձայնային հրահանգները կօգնեն Ձեզ միանալ Հեռախոսային կենտրոնի աշխատակիցներին:

Պարզապես զանգահարեք +374 60 655 000

Անվտանգություն

Ձեր գործարքների անվտանգությունն ապահովելու նպատակով բոլոր հեռախոսազանգերը ձայնագրվում են և պահվում էլեկտրոնային տեսքով: Ինչպես նաև Ձեր բոլոր գործարքները կգրանցվեն Ձեր հաշվի պարբերական քաղվածքում:

Նախքան որևէ գործարք կատարելը Ձեզ կտրվեն անվտանգության հարցեր՝ Ձեր անձը նույնականացնելու նպատակով:

Որոշ գործարքների դեպքում, որոնք հնարավոր չէ իրականացնել ստանդարտ աշխատանքային ժամերից դուրս, Ձեր հանձնարարականը կընդունվի, և գործարքը կիրականացվի առավելագույնը հաջորդ բանկային օրվա ընթացքում՝ բացառությամբ քարտի կասեցման, որը կկատարվի անհապաղ:

Բանկը կարող է միակողմանի դադարեցնել Հաճախորդի հետ կնքած հեռախոսային բանկային ծառայությունից օգտվելու պայմանագիրը, եթե վերջին 12 ամիսների ընթացքում Հեռախոսային բանկային ծառայության միջոցով գործարք չի կատարվել:

Ինչպես գրանցվել ծառայությանը

Հեռախոսային կապի միջոցով առաջարկվող բանկային ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է այցելել Բանկի որևէ մասնաճյուղ և ստորագրել «Հեռախոսային կապի միջոցով ներկայացված հանձնարարականների կատարման համաձայնագիր»-ը:

Ծառայության Սակագներ

Հեռախոսային բանկային ծառայության գրանցման միանվագ վճար

Ֆիզիկական անձանց, այդ թվում անհատ ձեռնարկատերերի համար	1000 ՀՀ դրամ
Օգտագործման վճար	Վճար չի կիրառվում
Բանկային ծառայությունների օգտագործում	Համաձայն Ծառայությունների Սակագների

Ծառայությունների ցանկ

Եթե Դուք արդեն գրանցվել եք հեռախոսային բանկային ծառայությանը, ապա կարող եք օգտվել հետևյալ ծառայություններից.

Հաշիվներ և գործառնություններ

- Հաշվի մնացորդի հարցում
- Գործարքների մանրամասների հարցում
- Ամսաթվով գործարկվող պարբերական վճարման հանձնարարականի ձևակերպում/փոփոխում/չեղարկում
- Վարկային հաշվի վերաբերյալ տեղեկատվության հարցում
- Փոստային/էլեկտրոնային փոստի հասցեների և հեռախոսահամարների փոփոխում

Փոխանցումներ և վճարումներ

- Փոխանցումներ Ձեր հաշիվների միջև
- Փոխանցումներ ՀՀ տարածքում գործող բանկերին¹
- Միջազգային փոխանցումներ¹
- Փոխանցում կրեդիտ քարտին
- Վարկի մարում

¹ Մեկ օրվա ընթացքում կատարվող գործարքների ընդհանուր սահմանաչափը չի կարող գերազանցել 10 000 ԱՄՆ դոլարը կամ համարժեքն այլ արժույթով:

Հարցումներ

- Ավանդների տոկոսադրույքների հարցում
- Արտարժույթի փոխարժեքների հարցում
- «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում

Այլ ծառայություններ

- Քարտի ակտիվացում
- Քարտի կասեցում, քարտային գործարքի հետազոտման հրահանգի ներկայացում
- Քարտի վերաթողարկում
- Քաղվածքի/տեղեկանքի պատվիրում

- Արժեթղթերի առքի և վաճառքի հանձնարարականների ներկայացում (բրոքերային ծառայություններ)¹
- Քարտի վարկային սահմանաչափի ժամանակավոր փոփոխություն

Լրացուցիչ դրույթներ

Անվտանգության ապահովման և ծառայությունների վերաբերյալ այլ մանրամասներին կարող եք ծանոթանալ Բանկի մասնաճյուղերում կամ այցելելով www.hsbc.am «Բանկային ծառայությունների օգտվելու եղանակներ» կայքէջ:

Արտոնյալ սակագներ

Օգտվեք արտոնյալ սակագներից նշված ծառայությունները հեռախոսային բանկային ծառայությունների միջոցով իրականացնելիս:

Ծառայություն	Սակագին	
	Ստանդարտ	Հեռախոսային բանկային ծառայությամբ
Հիմնական և հավելյալ բանկոմատային քարտերի վերաթողարկում	3,000 ՀՀ դրամ	անվճար ²
Արտարժույթային փոխանցումներ (ԱՄՆ դոլարով և Եվրոյով) ՀՀ տարածքից դուրս	0.1%/0.3% (Լվազագույնը 6,000 ՀՀ դրամ)	0.1% (Լվազագույնը 6,000 ՀՀ դրամ)
Հաշվեկշռի հաստատման/բանկային հաշվի/վարկի վերաբերյալ տեղեկանքներ	5,000 ՀՀ դրամ ^{3*}	1,000 ՀՀ դրամ ^{4*}
Բանկային հաշվի յուրաքանչյուր 1 ամսվա քաղվածքի, 1 ամսվա հաշվի պատմության կամ յուրաքանչյուր 1 գործարքի վավերացման փաստաթղթի կրկնօրինակի տրամադրում (եթե հայցվում է 6 ամսից ավել վաղեմության տեղեկատվություն)	3,000 ՀՀ դրամ*	1,000 ՀՀ դրամ ^{4*}

* Ներառյալ ԱԱՀ

¹ Բրոքերային ծառայությունները տրամադրվում են Հաճախորդի և Բանկի միջև բրոքերային ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի առկայության դեպքում:

² Վերաթողարկված բանկոմատային քարտերը կուղարկվեն Ձեր նախընտրած մասնաճյուղ/հասցեով դիմումի ընդունման օրվանից 3-5 աշխատանքային օրվա ընթացքում:

³ 10,000 ՀՀ դրամ վճար կկիրառվի, եթե հաճախորդը Բանկի հաշվետեր է ավելի պակաս քան 6 ամիս (ներառյալ Օկլայն/Մոբայլ կամ Հեռախոսային Բանկային ծառայության միջոցով դիմելու դեպքում):

⁴ Տեղեկանքը/փաստաթղթի կրկնօրինակը կուղարկվի Ձեր նախընտրած մասնաճյուղ դիմումի ստացման օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն հանդիսանում է Էյչ-Էս-Բի-Սի Խմբի անդամ, որն աշխարհի ֆինանսական և բանկային ծառայություններ մատուցող խոշորագույն կազմակերպություններից մեկն է:

© «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, 2023:

Բոլոր իրավունքները պահպանված են:

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0009, Տերյան փողոց 66